Minnesota Population Center

Counselor-Deputy Head Duties
Order N38

Census: 2001
Armenia

IPUMS-International
funded by the University of Minnesota and the National Science Foundation Grant SES-0433654
Minneapolis, Minnesota USA: 2006

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ՊԵՏԵՐԻ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ԳԾՈՎ ՏԵՂԱԿԱԼԻԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Երևան - 2001

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀՀ 2001թ. մարտի 30-ին

Հաստատված է
ՀՀ վիճակագրության պետական խորհրդի
30.04.2001թ. N38 որոշմամբ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ Ն ԴՐԱՆՑ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ՊԵՏԵՐԻ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ԳԾՈՎ ՏԵՂԱԿԱԼԻ-ԽՈՐՀՐԴԱՏՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Երևան 2001թ.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ՀՀ կառավարության 19. 02. 2000թ. h. 78 որոշման համաձայն 2001թ. հոկտեմբերի 10-19-ը անցկացվելու է մարդահամար: «Մարդահամարի մասին» ՀՀ օրենքի հոդված 6 համաձայն մարդահամարի նախապատրաստման, անցկացման և նյութերի մշակման աշխատանքների պատասխանատուն վիճակագրության պետական լիազորված մարմինն է՝ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայությունը (ՀՀ ԱՎԾ), մարզերում՝ ԱՎԾ-ի մարզային վարչությունները և դրանց տարածքային բաժինները:

ՀՀ 2001թ. մարդահամարի նախապատրաստման և անցկացման աշխատանքները մարզերում և տարածքներում ժամանակացույցով նախատեսված ժամկետներում իրականացնելու համար ՀՀ ԱՎԾ-ի մարզային (տարածքային) վարչություններում (բաժիններում) պայմանագրային կարգով կընդունվեն պետի մարդահամարի գծով տեղակալներ-խորհրդատուներ (այսուհետև՝ տեղակալներ): Նրանց հավաքագրումն ու պայմանագրերի կնքումը, կսկսվի մայիսի 1-ից:

Իրենց աշխատանքային գործունեության ընթացքում ՀՀ ԱՎԾ-ի մարզային վարչության և դրանց տարածքային բաժինների պետերի մարդահամարի գծով տեղակալներն առաջնորդվում են «Մարդահամարի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով, ՀՀ վիճակագրության պետական խորհրդի կողմից հաստատված ցուցումներով և հրահանգներով և ՀՀ ԱՎԾ-ի նախագահի հրամաններով: Նրանց վրա, *որպես մարդահամարի աշխատողներ,* «Մարդահամարի մասին»՝ ՀՀ օրենքի *13 հոդվածով* պատասխանատվություն է դրվում մարդահամարի ժամանակ հավաքագրված անհատական տեղեկատվության գաղտնիության պահպանման համար, համաձայն որի՝

«Բնակչության վերաբերյալ անհատական տեղեկություններին տիրապետող աշխատակիցներին արգելվում է որևէ մեկին հաղորդել մարդահամարի լրացված փաստաթղթերի բովանդակությունը: Մարդահամարի սկզբնական (անհատական) տվյալների օգտագործման կարգի խախտման դեպքում մարդահամարի աշխատողները պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով»:

ՀՀ ԱՎԾ-ի մարզային (տարածքային) վարչության (բաժնի) պետի մարդահամարի գծով տեղակալն իր անմիջական ղեկավարի հետ միասին պատասխանատվություն է կրում՝

ա) ՀՀ 2001թ. մարդահամարի նախապատրաստման, անցկացման և նյութերի մշակման աշխատանքների ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ մարդահամարի

նախապատրաստական աշխատանքների ժամանակին և որակով կազմակերպման ու իրականացման,

բ) բնակչության շրջանում զանգվածային-բացատրական աշխատանքների կազմակերպման,

գ) բնակչության հաշվառման ամբողջականության և մարզում (տարածքում) մարդահամարային բոլոր փաստաթղթերի լրացման որակի ու ճշգրտության ապահովման համար:

Իրենց գործունեության ընթացքում ՀՀ ԱՎԾ-ի մարզային (տարածքային) վարչությունների (բաժինների) մարդահամարի գծով տնեղակալները պետք է ղեկավարվեն ՀՀ 2001թ. մարդահամարի կազմակերպչական և մեթոդաբանական հիմնական դրույթներով և յուրաքանչյուր գործընթացը կանոնակարգող ցուցումներով ու հրահանգներով:

Մարդահամարի նախապատրաստական փուլի հիմնական աշխատանքներից մեկը հանդիսանում է քաղաքներում և խոշոր գյուղերում (5 հազար և ավելի բնակչությամբ) տների (շինությունների), գյուղական վայրերում գյուղական բնակավայրերի և դրանց տարածքում գտնվող այլ բնակատեղերի ցուցակների կազմումը: Այդ գործընթացը կազմակերպելու և վերահսկելու համար ՀՀ ԱՎԾ-Ի մարզային (տարածքային) վարչության (բաժնի) պետի մարդահամարի գծով տեղակալն անցնում է ուսուցում (հրահանգավորում) և ղեկավարվում՝ համաձայն ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության մարզային վարչություններին և դրանց տարածքային բաժիններին՝ տների (շինությունների) ցուցակները և գյուղական բնակավայրերի ցուցակները կազմելու կարգի մասին ցուցումների և հրահանգների:

Այս փուլում նա պարտավոր է մասնակցել՝

- քաղաքների և խոշոր գյուղերի սխեմատիկ հատակագծերի վրա տարածքը ցուցակագրման տեղամասերի բաժանելու գործընթացին,
- ցուցակագրողների հավաքագրման, պայմանագրերի կնքման, ուսուցման (հրահանգավորման) և նրանց՝ իրենց տեղամասի սահմաններին ծանոթացնելու աշխատանքներին,
- գյուղապետի աշխատակազմի քարտուղարների ուսուցմանը (հրահանգավորմանը),
- ցուցակագրողների աշխատանքի ամենօրյա ընտրանքային ստուգումներին,
- սահմանված ժամկետում կազմակերպել տների (շինությունների) ցուցակների և գյուղական բնակավայրերի և դրանց տարածքում գտնվող այլ բնակատեղերի կազմած ցուցակների ընդունումը՝ համաձայն ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության մարզային վարչություններին և դրանց տարածքային բաժիններին՝ քաղաքների համար կազմված տների

(շինությունների) ցուցակների, գյուղական վայրերում՝ գյուղական բնակավայրերի և դրանց տարածքում գտնվող այլ բնակատեղերի ցուցակների ընդունման կարգի մասին ցուցումների:

սխեմատիկ հատակագծերի բոլոր օրինակների վրա ցուցակագրողների կողմից հայտնաբերված և սխեմատիկ հատակագծերում կատարված փոփոխությունների անցկացմանը

Հաջորդ փուլով՝ 2001թ. հունիսին, մասնակցել ՀՀ ԱՎԾ-ի կողմից կազմակերպվող ուսուցմանը (հրահանգավորմանը), իսկ հուլիսին կազմել ՀՀ 2001թ. մարզի և տարածքի մարդահամարի անցկացման կազմակերպման պլանը՝ հիմք ընդունելով ՀՀ ԱՎԾ-ի մարզային վարչություններին և դրանց տարածքային բաժիններին՝ 2001թ. մարդահամարն անցկացնելու կազմակերպման պլանները կազմելու մասին ցուցումները:

ՀՀ 2001թ. մարդահամարի անցկացման կազմակերպման պլանը ներառում է հետևյալ բաժինները՝

- մարդահամարային շրջանացումը (տարածքի բաժանումը մարդահամարի, հրահանգչական, հաշվային տեղամասերի),
- մարդահամարային կադրերի պահանջարկը,
- ուսուցման գրաֆիկը և զանգվածային-բացատրական աշխատանքների ծրագիրը:

Ըստ 2001թ. մարդահամարի նախապատրաստման, անցկացման և նյութերի մշակման աշխատանքների ժամանակացույցի՝ օգոստոս ամսից կանցկացվեն ՀՀ ԱՎԾ-ի մարզային վարչությունների և դրանց տարածքային բաժինների պետերի, մարդահամարի գծով նրանց տեղակալների, մարդահամարի տեղամասերի վարիչների և նրանց օգնականների ուսուցման (հրահանգավորման) գործընթացը՝ ՀՀ 2001թ. մարդահամարի անցկացման և մարդահամարի հարցաթերթի լրացման կարգի մասին: Կազմպլանով հատատված ժամկետներում կազմակերպել հրահանգիչ-հսկիչների և հաշվարարների հավաքագրումը, ուսուցումն ու գիտելիքների ստուգումը:

Մարդահամարի գծով ՀՀ ԱՎԾ-ի մարզային (տարածքային) վարչության (բաժնի) պետի տեղակալը պարտավորվում է վերահսկել հետևյալ գործընթացները՝

- մարդահամարի տեղամասերին մարդահամարն անցկացնելու համար անհրաժեշտ փաստաթղթերով ապահովելու,
- հաշվարարների կողմից նախնական շրջագայության դուրս գալու,
- մարդահամարի անցկացման (տվյալների հավաքագրման):

Մարդահամարի առաջին օրը նա պարտավոր է շրջել մարզի (տարածքի) մարդահամարի տեղամասերում, օրվա վերջում մարդահամարի տեղամասերի վարիչների հետ կազմակերպել հավաք ու վերլուծել մարդահամարի առաջին օրվա ընթացքում կազմակերպչական

աշխատանքների և մարդահամարային փաստաթղթերի լրացման ժամանակ առաջացած դժվարությունները: Մարդահամարի անցկացման յուրաքանչյուր օր մարդահամարի տնտեսությունների վարիչներից ընդունել շտապ հաղորդագրություններ՝ սահմանված ձևերով նրանց տնտեսության նախապատրաստական աշխատանքների, մարդահամարի վերահսկիչ շրջագայության անցկացման և պահանջվող այլ աշխատանքների ընթացքի մասին:

Մարդահամարի ավարտից հետո՝ հոկտեմբերի 20-25-ը, նա պարտավոր է վերահսկել ընտրանքային վերահսկիչ շրջագայության (շրջայց) կատարման ընթացքը:

Մարդահամարի գծով ՀՀ ԱՎԾ-ի մարզային վարչությանն տարածքային բաժնի պետի տեղակալը մարդահամարի ավարտից հետո տարածքային բաժնի պետի հետ միասին մարդահամարի տնտեսության վարիչներից ընդունում է՝

- հաշվարկների հանձնած պայուսակները՝ լրացված հարցաթերթերով, հուշատետրով, ամփոփ տեղեկագրով և տնտեսության հատակագծով,
- հրահանգիչ-հսկիչների ամփոփ տեղեկագրերը, հուշատետրերը, հաշվետվությունները,
- մարդահամարի տնտեսության վարիչի և նրա օգնականի հուշատետրերը՝ մարդահամարի կազմակերպման և անցկացման վերաբերյալ իրենց դիտողություններով և առաջարկություններով,
- մարդահամարի տնտեսության ամփոփ տեղեկագրերը (ձև 8 և նրա հավելվածը),
- բոլոր օժանդակ նյութերը՝ հատակագծեր, ցուցակներ, մարդահամարի չօգտագործված և փչացրած հարցաթերթերը և մարդահամարային այլ փաստաթղթեր:

Մարդահամարի տնտեսության վարիչի հետ միասին նա անցկացնում է տնտեսություններին վերաբերվող հսկիչ թերթերի և վերահսկիչ փաստաթղթերի մարման աշխատանքները:

ՀՀ ԱՎԾ-ի կողմից սահմանված ժամկետներին վերոհիշյալ նյութերը հանձնել ՀՀ ԱՎԾ-ի մարդահամարի վարչություն՝ համաձայն «ՀՀ 2001թ. մարդահամարի նյութերի ընդունման կարգի մասին ցուցումների»:

Նշումների համար .....

Նշումների համար .....

Նշումների համար